# 011301.04.7 «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»

## Մանկավարժության մագիստրոս

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» |
| **ՈԱՇ-ի մակարդակ** | Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ |
| **Որակավորման աստիճան** | Մանկավարժության մագիստրոսի աստիճան |
| **Կրեդիտների քանակը** | 90 |
| **Ուսման տևողությունը** | 1,5 տարի |
| **Բուհ** | Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան |
| **Ֆակուլտետ** | Հասարակական գիտությունների |
| **Ամբիոն** | Մանկավարժության և հոգեբանության |
| **Ուսուցման լեզու** | Հայերեն |
| **Ուսուցման ձևը** | Առկա |
| **ԿԾ-ի մուտքի պայմաններ** | «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա բակալավրի աստիճան: |
| **Ծրագրի կառուցվածքը և նկարագրությունը** | «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի նորմատիվային ժամկետն ուսուցման առկա ձևում մեկ ու կես տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 90 կրեդիտ է (1 կրեդիտը՝ 30 ժամ): Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից.<br>I.Ընդհանուր դասընթացներ (6 կրեդիտ),<br>II.Մասնագիտական պարտադիր դասընթացներ (39 կրեդիտ),<br>III.Կամընտրական դասընթացներ (12 կրեդիտ),<br>IV.Գիտահետազոտական աշխատանք՝ (12 կրեդիտ)<br>V.Գիտամանկավարժական պրակտիկա (6 կրեդիտ),<br>VI.Մագիստրոսական թեզ(15 կրեդիտ) : |
| **Ծրագրի հիմնական նպատակը** | Ծրագրի նպատակն է պատրաստել կոմպետենտ մանկավարժներ ՀՀ հանրակրթական դպրոցների համար՝ տալով մանկավարժության մագիստրոսի աստիճան ուսուցչի որակավորմամբ: |
| **Ծրագրի կրթական վերջնարդյունքները.** | «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» (011301.04.7) մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի որակավորում ունեցող շրջանավարտը պետք է՝<br>***Գիտենա՝***<br>• մանկավարժահոգեբանական խորը գիտելիքներ,<br>• արդի և հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները: |

| | |
|---|---|
| | ***Կարողանա՝***<br>• կազմակերպել մասնագիտական գործունեություն,<br>• կիրառել ժամանակակից մեթոդներ, տեխնոլոգիաներ,<br>• իրականացնել մանկավարժական հետազոտություններ:<br>***Տիրապետի՝***<br>• ուսուցչական կոմպետենցիաներին,<br>• գիտելիքի կիրառման հմտություններին,<br>• տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) և տվյալների հետ աշխատելու հմտություններին,<br>• մանկավարժական գործունեության կազմակերպման և իրականացման գործիքակազմին,<br>• էթիկայի կանոններին, |
| «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ձեռք բերվող կոմպետենցիաների ցանկ | Մանկավարժի որակավորմամբ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ մագիստրոսը, ելնելով մասնագիտական գործունեության խնդիրներից և հիմնական կրթական ծրագրի նպատակներից, պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին:<br><br>***ա) Գործիքային կոմպետենցիաներ (այսուհետև՝ ԳԿ )***<br>Գործիքային կոմպետենցիաները ներառում են.<br>**ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,<br>**ԳԿ2** կազմակերպելու և պլանավորելու ունակություն,<br>**ԳԿ3** հենքային և ընդհանուր գիտելիքներ,<br>**ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,<br>**ԳԿ8** տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),<br>**ԳԿ9** խնդիրների լուծում,<br>**ԳԿ10** որոշումների ընդունում:<br>***բ) Միջանձնային կոմպետենցիաներ ( այսուհետև՝ ՄՁԿ )***<br>Միջանձնային կոմպետենցիաները ներառում են.<br>**ՄՁԿ1** քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,<br>**ՄՁԿ2** թիմային աշխատանք,<br>**ՄՁԿ3** միջանձնային ունակություններ,<br>**ՄՁԿ4** միջառարկայական թիմում աշխատելու |

ունակություն,

**ՄՉԿ5** այլ ոլորտների փորձագետների հետ հաղորդակցվելու ունակություն,

**ՄՉԿ6** բազմաձևության և բազմամշակութայնության ընդունում,

**ՄՉԿ7** միջազգային միջավայրում աշխատելու ունակություն,

**ՄՉԿ8** բարոյական արժեքներ:

***<u>գ) Համակարգային կոմպետենցիաներ ( այսուհետև՝ ՀԳԿ)</u>***

Համակարգային կոմպետենցիաները ներառում են.

**ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

**ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,

**ՀԳԿ3** սովորելու ունակություն,

**ՀԳԿ4** նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,

**ՀԳԿ5** նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,

**ՀԳԿ6** առաջնորդի հատկություններ,

**ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն,

**ՀԳԿ9** նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն

<u>**ՀԳԿ10**</u> նախաձեռնողականություն և ձեռներեցություն,

<u>**ՀԳԿ11**</u> որակի կարևորության գիտակցում,

<u>**ՀԳԿ12**</u> հաջողության ձգտում:

***<u>դ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (այսուհետև՝ ՄԿ)</u>***

**ՄԿ 1** - սոցիալական կարևորություն ունեցող խնդիրների և գործընթացների գիտական վերլուծության, մասնագիտական գործունեության ընթացքում ծագած խնդիրների գիտական էության բացահայտման ունակություն, ինչպես նաև մասնագիտական և սոցիալական գործունեության տարբեր ոլորտներում հումանիտար, սոցիալական և տնտեսական գիտությունների մեթոդների գործնականում կիրառելու ունակություն

**ՄԿ 2** - տրամաբանական մտածողության օրենքների օգտագործման ունակություն

**ՄԿ 3** - գիտական նոր գիտելիքների ձեռքբերման ունակություն

**ՄԿ 4** - մասնագիտական գործունեության մեջ հիմնական մեթոդները օգտագործելու, գիտության մեջ մոդելավորման, տեսական և գիտափորձնական հետազոտության մեթոդները կիրառելու պատրաստվածություն

**ՄԿ 5** - մասնագիտական գործունեության մեջ

| | |
|---|---|
| | համակարգչային, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից միտումները հաշվի առնելու ունակություն<br>**ՄԿ 6** - ճանաչողական խնդիրների յուրահատկությունները և դրանց գիտական բովանդակությունը, ինչպես նաև սովորողների տարիքային առանձնահատկություններն ու դրդապատճառները՝ հաշվի առնելով առարկայի դասավանդման ունակությունը<br>**ՄԿ 7** - ելնելով դասավանդվող առարկայի առանձնահատկություններից՝ ուսումնական գործընթացի գործունեական ուղղորդման և ինտերակտիվ մանկավար-ժական տեխնոլոգիաների օգտագործման ունակություն<br>**ՄԿ 8** - ուսումնական խնդիրներին, սովորողների պատրաստվածության մակարդակին և նրանց անհատական բնութագրին համապատասխան ուսուցման միջոցների և մեթոդների որոշում և զուգակցում<br>**ՄԿ 9** - ուսուցման գործընթացի համակողմանի ախտորոշում և վերլուծություն կատարելու և դրա հիման վրա կրթության որակի գնահատման համակարգ ձևավորելու ունակություն<br>**ՄԿ 10** - մասնագիտական գործունեության ոլորտում տեղեկատվության հավաքման, վերլուծության, համակարգման և օգտագործման պատրաստվածություն<br>**ՄԿ 11** - ուսումնական ծրագրի, ուսումնամեթոդական ապահովման հիմնավորված ընտրություն և դրանց համուղղում կոնկրետ ուսումնական գործընթացին<br>**ՄԿ 12** - առարկայական ծրագրի թեմաների և բաժինների յուրահատկությունների հիման վրա ուսումնական պարապմունքների պլանավորման ունակություն<br>**ՄԿ 13** - մասնագիտությանը համապատասխան սովորողների գիտահետազոտական գործունեությունը կազմակերպելու պատրաստվածություն<br>**ՄԿ 14** - սեփական մանկավարժական գործունեությունը պլանավորելու, կազմակերպելու, վերլուծելու, ինչպես նաև այն անընդհատ կատարելագործելու ունակություն<br>**ՄԿ 15** - թիմում աշխատելու ունակություն<br>**ՄԿ 16** - կորպորատիվ մշակույթի ձեռքբերում<br>**ՄԿ 17** - միջազգային ստանդարտներին համապատասխան նորարարական ինտերակտիվ մեթոդներին տիրապետում<br><br>***<u>ե) Ուսուցչական կոմպետենցիաներ (այսուհետև՝ ՈՒԿ)</u>***<br>**ՈՒԿ 1** - հանձնառություն սովորողների առաջադիմության և ձեռքբերումների նկատմամբ<br>**ՈՒԿ 2** - ուսուցման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները ուսումնասիրելու, ներդնելու կարողություն<br>**ՈՒԿ 3** - խորհրդատվական կարողություն<br>**ՈՒԿ 4** - առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն<br>**ՈՒԿ 5** - անհատների և խմբերի հետ հաղորդակցվելու կարողություն<br>**ՈՒԿ 6** - ուսուցման բարենպաստ միջավայր ստեղծելու կարողություն<br>**ՈՒԿ 7** - ժամանակը արդյունավետ օգտագործելու հմտություն<br>**ՈՒԿ 8** - սեփական գործունեության արդյունքները գնահատելու և վերլուծելու կարողություն |

| | |
|---|---|
| | **ՈՒԿ 9** - մասնագիտական կատարելագործման անհրաժեշտության գիտակցում<br>**ՈՒԿ 10** - ուսուցման արդյունքների և ուսումնառողների ձեռքբերումները գնահատելու կարողություն<br>**ՈՒԿ 11** - համագործակցության միջոցով միջառարկայական խնդիրներ լուծելու կարողություն<br>**ՈՒԿ 12** - սովորողների կարիքներին արձագանքելու կարողություն<br>**ՈՒԿ 13** - մանկավարժական կոլեկտիվում հաղորդակցական հմտություններին տիրապետելու կարողություն |
| **5. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ** | Ուսուցման իրականացման հիմնական ձևերն են.<br>ա) դասախոսություններ,<br>բ) գործնական աշխատանքներ, սեմինարներ, լաբորատոր աշխատանքներ<br>գ) ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, էսսե, գործնական խաղեր),<br>դ) գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ: |
| **6. Գնահատման մեթոդներ** | ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:<br>Մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին:<br>Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում.<br>- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան,<br>- ինքնուրույն կատարվող աշխատանքներ,<br>- գործնական (սեմինար) և լաբորատոր (պրակտիկում) աշխատանքներին ուսանողի մասնակցություն,<br>- ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ կամ քննություններ: |
| **7. Մասնագիտական գործունեության ոլորտներ** | «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» (011301.04.7) մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝<br>1. ուսուցիչ,<br>2. հանրակրթական դպրոցի տնօրեն, կրթության կազմակերպիչ,<br>3. դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն |

| | |
|---|---|
| | 4. մանկավարժական գիտական-կրթական կենտրոնների աշխատակից<br>5. տարբեր կրթադաստիարակչական հաստատություններում ղեկավար<br>6. հասարակական կազմակերպություններում որպես մանկավարժ, կազմակերպիչ<br>7. ուսուցչի օգնական |
| **Հետագա ուսման հնարավորությունները** | «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» (011301.04.7) մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած մագիստրոսը պատրաստ է կրթությունը շարունակելու՝<br>- ասպիրանտուրայում,<br>- դոկտորանտուրայում: |

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,

Մ. գ. թ., դոցենտ՝__________ Լ. Գ. Բաղդասարյան